*Համարը* N 170-Ն
*Տիպը* Որոշում
*Սկզբնաղբյուրը* Լ՝ՂՀՊՏ 2018.04.06/05(345)
*Ընդունող մարմինը* ԱՀ կառավարություն
*Ստորագրող մարմինը* ԱՀ պետական նախարար
*Վավերացնող մարմինը*
*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* 09.04.2018
*Տեսակը* Մայր
*Կարգավիճակը* Գործում է
*Ընդունման վայրը* Ստեփանակերտ
*Ընդունման ամսաթիվը* 20.03.2018
*Ստորագրման ամսաթիվը* 20.03.2018
*Վավերացման ամսաթիվը*
*Ուժը կորցնելու ամսաթիվը*

⊞ Կապեր այլ փաստաթղթերի հետ

ԱՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ԱՐՑԱԽԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

# ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 մարտի 2018թ. N 170-Ն

ք.Ստեփանակերտ

## «ԱՐՑԱԽԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի «Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 370-Ն որոշման 15-րդ կետի 2-րդ ենթակետը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով` Արցախի Հանրապետության կառավարությունը *ո ր ո շ ու մ է.*

1. Հաստատել «Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը` համաձայն հավելվածի:

2. Թույլատրել Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությանը` անհրաժեշտության դեպքում սույն որոշման 1-ին կետով հաստատված նախահաշվում կատարել վերաբաշխում ծախսերի տնտեսագիտական դասակարգմամբ նախատեսված հոդվածների միջև` համաձայնեցնելով Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

3. Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարին` մեկամսյա ժամկետում հաստատել սույն որոշման 1-ին կետով հաստատված նախահաշվով նախատեսված հատկացումների եռամսյակային բաշխումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2018 թվականի մարտի 20-ի N 170-Ն որոշման

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ
«ԱՐՑԱԽԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
2018 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ

(հազար դրամ)

| Անվանումները | Հոդված | Տարի |
|---|---|---|
| Մուտքեր | | |
| ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԸ | | 9,220.0 |
| ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | x | 227,554.2 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 236,774.2 |
| Ելքեր | | |
| Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ, | x | 203,635.2 |
| 1. ՊԵՏԱԿԱՆ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ԵՆԹԱԿԱ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ՝ ԸՆԴԱՄԵՆԸ, այդ թվում՝ | x | 184,643.0 |
| 1.1 Աշխատանքի վարձատրություն | x | 184,643.0 |
| - Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 411100 | 180,243.0 |
| - Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ | 411200 | 4,400.0 |
| 2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ | x | 16,062.2 |
| 2.1 Շարունակական ծախսեր | | 5,126.2 |
| -Էներգետիկ ծառայություններ | 421200 | 1,600.0 |
| -Կոմունալ ծառայություններ | 421300 | 80.0 |
| -Կապի ծառայություններ | 421400 | 812.2 |
| -Ապահովագրական ծախսեր | 421500 | 234.0 |
| -Գույքի և սարքավորումների վարձակալություն | 421600 | 2,400.0 |
| 2.2 Գործուղումների և շրջագայության ծախսեր | x | 400.0 |
| -Ներքին գործուղումներ | 422100 | 400.0 |
| 2.3 Պայմանագրային այլ ծառայությունների ձեռք բերում | x | 1,820.0 |
| -Վարչական ծառայություններ | 423100 | 90.0 |
| -Համակարգչային ծառայություններ | 423200 | 630.0 |
| -Տեղեկատվական ծառայություններ | 423400 | 1,000.0 |
| -Ներկայացուցչական ծախսեր | 423700 | 100.0 |
| 2.4 Այլ մասնագիտական ծառայությունների ձեռք բերում | x | 6.0 |
| -Մասնագիտական ծառայություններ | 424100 | 6.0 |
| 2.5 Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր) | x | 1,180.0 |
| -Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 425200 | 1,180.0 |
| 2.6 Նյութեր (ապրանքներ) | x | 7,530.0 |
| -Գրասենյակային նյութեր և հագուստ | 426100 | 450.0 |
| -Տրանսպորտային նյութեր | 426400 | 6,000.0 |
| -Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 426700 | 200.0 |
| -Հատուկ նպատակային այլ նյութեր | 426900 | 880.0 |
| 3. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ | x | 2,930.0 |
| 3.1 Հարկեր, պարտադիր վճարներ և տույժեր, որոնք կառավարման տարբեր մակարդակների կողմից կիրառվում են միմյանց նկատմամբ | x | 1,930.0 |
| -Այլ հարկեր | 482200 | 280.0 |
| -Պարտադիր վճարներ | 482300 | 1,650.0 |
| 3.2 Այլ ծախսեր | x | 1,000.0 |
| -Այլ ծախսեր | 486100 | 1,000.0 |
| Բ. ՈՉ-ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ | x | 3,500.0 |
| 1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ | x | 3,500.0 |
| -Վարչական սարքավորումներ | 512200 | 2,000.0 |
| -Աճեցվող ակտիվներ | 513100 | 1,500.0 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | x | 207,135.2 |
| ՏԱՐԵՎԵՐՋԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴ | | 29,639.0 |